

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻՆ

Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի նախկին առաջնորդ գերաշնորհ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը հրահանգել է թեմի եկեղեցիներին՝ Հայ Եկեղեցու պատմական տիտղոսի վերա հավելուլ «ՕՐԹՈԴՈՔՍ» մակդիրը, որի դեմ բազմաթիվ բողոքներ ենք ստացել: «Օրթոդոքս» մակդիրը Հույն և Ռուս եկեղեցիների և վերջինիս ավտոկեֆալ (ինքնանկախ) նյուղերի արտահայտիչ մակդիրն է: Այսու հայտարարում ենք Հայ եկեղեցու աթոռակալներին, առաջնորդներին և հայ ժողովրդին, որ Հայ Եկեղեցու պաշտոնական անունը կամ տիտղոսն է «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ», որ և՛ պատմական է և՛ դարերի գործածությամբ սրբագործված Հայ Եկեղեցու և ժողովրդի կողմից, և ո՛չ ոք իրավատեր է հիշյալ պատմական տիտղոսի վերա հավելում կամ հապավում կատարել:

Հայ Եկեղեցու օրենսդիր մարմինը— Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ գումարված ազգային-եկեղեցական ժողովն է, որի որոշումները միայն օրենք են, երբ նոքա հայտարարվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական կոնդակով:

Հայտարարելով վերոհիշյալը, այսու հորդորում ենք բոլոր հոգևորականության և եկեղեցական մարմիններին՝ նախանձախնդիր լինել վերոհիշյալ սկզբունքին, հերի մնալ ինքնովի կարգադրություններից և ազատ մնալ պատասխանատվությունից: Ազատ է ամեն ոք գիտական ուսումնասիրություններ կատարել, սակայն ո՛չ գործադրել ուսումնասիրության արդյունքը, առանց իրավատեր մարմնի թույլտվության:

Գեորգ Զ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին,
10 դեկտեմբերի 1953 թ.